Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 2-ի N 736 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ հասարակական կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին (այսուհետ՝ նախարար) անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածություններ (այսուհետ՝ թեկնածություններ) առաջարկելու կարգը:

2. Հասարակական կազմակերպությունների կողմից թեկնածություններ ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ նախարարության աշխատակազմ) անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնը թափուր մնալուց հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում հրապարակում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պաշտոնական ինտերնետ կայքի միջոցով:

3. Հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվող թեկնածուների ցուցակը (այսուհետ՝ ցուցակ) հաստատվում է հինգ հասարակական կազմակերպության համատեղ արձանագրությամբ, թեկնածուի գրավոր համաձայնության հիման վրա: Արձա-

նագրությամբ հասարակական կազմակերպություններն իրենց կազմից ընտրում են փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպությունը:

4. Ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ ներկայացվում են թեկնածուի կենսագրական տվյալները, տեղեկատվություն նրա կրթության և հետբուհական աշխատանքային գործունեության մասին, իսկ արձանագրությանը կից ներկայացվում են տվյալներն ու տեղեկատվությունը հավաստող փաստաթղթեր:

5. Հասարակական կազմակերպությունները (նրանց կազմից ընտրված հասարակական կազմակերպությունը) հայտարարության հրապարակման պահից ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում ցուցակը գրավոր դիմումով ներկայացնում են նախարարության աշխատակազմ՝ դրան կցելով արձանագրության բնօրինակը, ցուցակում ընդգրկված անձի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուի կենսագրական տվյալների, կրթության և հետբուհական աշխատանքային գործունեության վերաբերյալ փաստաթղթերը: Եթե հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են կամ ոչ ամբողջական, ապա նախարարության աշխատակազմն առաջարկում է երկօրյա ժամկետում շտկել թերությունները:

6. Նախարարության աշխատակազմի կողմից սույն կարգի 5-րդ կետով նախատեսված ցուցակը վերջիններիս կենսագրական, կրթության և հետբուհական աշխատանքային գործունեության, ինչպես նաև առաջադրած հասարակական կազմակերպությունների մասին տեղեկատվության հետ միասին հրապարակվում է նախարարության պաշտոնական ինտերնետ կայքում:

7. Ցուցակի հրապարակումից հետո ոչ ուշ, քան մեկշաբաթյա ժամկետում թեկնածություն ներկայացրած հասարակական կազմակերպություններն իրավունք ունեն գրավոր դիմումով նախարարություն ներկայացնելու այլ ցանկացած փաստաթուղթ, որը կարող է հավաստել թեկնածուների մասնագիտական փորձառությունը և նպաստել լիազոր մարմնի

ղեկավարի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ որակների ու արժանիքների բացահայտմանը:

8. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված ժամկետը լրանալուց հետո նախարարության աշխատակազմը կազմում է թեկնածուների ամփոփ ցուցակ և ներկայացնում նախարարին:

9. Եթե սույն կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո նախարարության աշխատակազմը չի ստանում հասարակական կազմակերպությունների համատեղ առաջարկություն, կամ ներկայացված թեկնածուները չեն համապատասխանում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա նախարարության աշխատակազմը նախարարության պաշտոնական ինտերնետ կայքում կրկին հրապարակում է հասարակական կազմակերպությունների կողմից թեկնածություններ ներկայացնելու վերաբերյալ հայտարարություն՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ